

## Տ. ՄԱՏԹԵՈՍ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ

(ավազանի անունը՝ Արթուր)

Ծնվել է 1968 թ. հոկտեմբերի 2-ին, Երևանում:

1975-85 թթ. սովորել և ավարտել է Կոտայքի մարզի Գեղադիր գյուղի միջնակարգ դպրոցը:

1985 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1991 թ. Սուրբ Խաչվերացի տոնին, ձեռամբ Գերաշնորհի Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1991 թ. սեպտեմբեր ամսից մինչև 1992 թ. եղել է վերակացու Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, այնուհետև Գերաշնորհի Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի հրավերով ծառայության է անցել Շիրակի թեմում:

1997 թ. հոկտեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պաշտպանել է ավարտաճառ «Հառիճավանքը և նրա վանական դպրոցը» թեմայով՝ արժանանալով «լավ» գնահատականի:

Շիրակի թեմում Արթուր սրկ. Պողոսյանն իր ծառայությունը շարունակել է մինչև 1998 թ. սեպտեմբեր ամիսը՝ կատարելով Հոգևոր ընծայարանի տեսչի և ավագ վերակացուի պարտականությունները:

1998 թ. դեկտեմբեր ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից (կաթողիկոսական փոխանորդության շրջանում) հրավիրվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և նշանակվել Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում որպես վերակացու, ուր ծառայում է մինչև այսօր: